ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի հուլիս ամսվա գործունեության վերաբերյալ

Ընթացիկ աշխատանքներ

Նախնական տվյալներով 2021 թվականի հունվար-հուլիս ամսիների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 16,050.7 մլն դրամ՝ պլանավորված 10,700.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 50 տոկոսով կամ 5,350.7 մլն դրամով: Հավաքագրված եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ թերակատարվել են 47.4 տոկոսով կամ պակաս է հավաքագրվել 14,441.7 մլն դրամ:

Հուլիս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3,112.1 մլն դրամ՝ պլանավորված 2,600.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 19.7 տոկոսով կամ 512.1 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում հաշվառվել է թվով 94, լուծարվել՝ 6 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 5 ստուգում, որի արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 2.2 մլն դրամի չափով հարկային պարտավորություններ:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 90 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 31-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 36-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 14-ը՝ ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 14-ի N 336-Ա որոշման 8-րդ կետով նախատեսված վնասի չափի հիմնավորվածության ճշտության, 5-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 4 այլ ուսումնասիրություններ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 8,686 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 8,239:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել պետական եկամուտների կոմիտեի դեմ 2 հայցադիմում՝ 110,0 հազ. դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով քննված 1 վարչական գործով սահմանվել է 15.0 հազար դրամ վարչական տուգանք:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 58 պայմանագրեր:

Հարկ վճարողների ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և տոկոսների փոխհատուցման նպատակով վճարված հարկերի գումարի վերադարձի ծրագրի շրջանակում հաշվետու ամսում կատարվել է 23.7 մլն դրամ գումարի չափով վերադարձ:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 9 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշման համաձայն՝ հաշվետու ամսում շարունակվել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով կրած նյութական վնասի չափի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու նպատակով հարկ վճարողներից դիմումների ընդունման գործընթացը, որի շրջանակում տրամադրվել են 251 տեղեկանքներ, մերժվել՝ 25 դիմում:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով կայքում հրապարակվել է 2021թ. 1-ին կիսամյակի արդյունքներով առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկը:

Հրատարակվել է «Հարկեր, տուրքեր և վճարներ» օրենքների ամփոփ ժողովածուն, որում ներառվել են առանձին հարկատեսակներին, տուրքերին և այլ պարտադիր վճարներին, ինչպես նաև հարկային վարչարարությանը վերաբերող օրենքները՝ 2021թ. մայիսի 1-ի դրությամբ:

ԱՀ կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 579-Ն որոշմամբ՝ ԱՀ պետական եկամուտների կոմիտեին վերապահված գործառույթների լիարժեք կատարման նպատակով հաշվետու ամսում Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում կազմակերպվել է սեմինար-քննարկում՝ վերահսկողական գործառույթ իրականացնող աշխատակիցների հետ:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից վերադարձ ստանալու նպատակով պատրաստվել և վարձու աշխատողներին ու անհատ ձեռնարկատերերին է տրամադրվել վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին թվով 16 տեղեկանք:

Կարևորելով համակարգն արհեստավարժ, նոր մտածողությամբ օժտված և ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետող երիտասարդ կադրերով համալրելու գործընթացը՝ կոմիտեում հունիս-հուլիս ամիսների ընթացքում կազմակերպվել է հարցազրույց և փորձուսուցում՝ հարթակ ստեղծելով պոտենցիալ մասնագետների բացահայտման ու համակարգում աշխատանքի ընդունվելու համար: Հարցազրույցին մասնակցելու հայտ էին ներկայացրել 20 դիմորդ: Հարցազրույցի և փորձուսուցման արդյունքներով լավագույն ցուցանիշներ ցուցաբերած 6 դիմորդներ հրավիրվել են հարկային համակարգում պայմանագրային հիմունքներով աշխատանքի:

Հուլիս ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 911, ելքագրվել՝ 501 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 2 գրություն: